


338-14
U-39

1934

ԱՐ. ՄԱՐՈՒՅԵԱՆ

17 FEB 2010

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



ԴՅՈՒՆԴՐԱՅ

1934

ՅԵՐԵՎԱՆ

338.14
Մ-39

Արքային

ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԳՅՈՒՂ. ՍՊԸ. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

338
66

26 JUN 2012

30699

Լույս և անհնաւմ Գյուղ. Սաց.
Վերակառաւցման Խնտիթուտի
քայլությամբ յեզ խմբա-
գրայամբ:



695

38

Հեղինակ՝ Խմբագրի՝ Վ. Բարյան
Սըբագրի՛ և. Այվազյան.

Հանձնված և արտադրության 1934 թ. փետրվարի 10-ին, ստորագրված և
սպառելու 1934 թ. փետրվարի 20-ին, գլավիտ 34, տիրած 4000, պատվեր № 92:

ԳՅՈՒՂԴՎԱԾԻ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆ ՆԱԽԱՆԴՑԱՆ № 50

ԱՌԱՋԱԲԱՆ

«Ներկա ապարին սոցիալիստական շինարարության պատմության մեջ կմտնի գործես գյուղի ճեղափոխական կերպարանափոխման գործում պրոլետարիատի ձեռք բերած խոշոր ու վճական հաղթանակների ապարին»:

(Պրակդայի 1933 թվի նոյեմբերի 12-ի առաջնորդողից):

«1933 թիվը մեր դժվարությունների վերջին տարին պետք է լինի» (ՄՏԱՀԻՆ): Մեծ առաջնորդի այս խոսքերը՝ շնորհիվ կուսակցության լենինյան քաղաքականության անշեղ կիրառման, շնորհիվ քաղբաժինների հսկայական ու յեռանդուն աշխատանքների՝ իրական գործ գարձավ:

Մեծ և այն կոլտնտեսությունների թիվը. վորոնք այս տարի երենց ազնիվ ու նվիրված աշխատանքների շնորհիվ կարողացան բարելավել իրենց նյութական-կոլտնտեսական կենցաղը, կարողացան պատվով կատարել բանվոր դասակարգի մեծ առաջնորդ ընկ. ՄՏԱՀԻՆի ցուցումները՝ ունենու դարձնելու մասին:

«Անտարակույս, փաստ և այն, վոր 1933 թվականին կոլտնտեսությունների մեծ մասն ավելի լավ են աշխատել, քան անցյալ տարի: Այս բոլորին հայտնի ու անվիճելի փաստ եւ Զգալիորեն բարձրացել ե աշխատանքային կարգապահությունը կոլտնտեսությունների մեծ մասում, թեև, ինարկե, վոչ բոլոր կոլտնտեսություններում, Աձել և Սերէ Դեղի կոլտնտեսաթերթին ԱՇԽԱՀԱՆՔԸ, Աձել և ԱԶՆՎՈՐԵՆ ԱՇԽԱՍՈՂ, ՈՒ ԿՈԼՏՆՏԵՍԵԱՅԻՆ ԲԱՐԻՔԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ թիվը: Լողիրին, վորն անցյալ տարի պարագալ թափառում եր կոլտնտեսույին փողոցներում, սրանը ականջին փսխութով, թե՛ ոմեր գործը վարել չե, մեր գործը մեղքեր համարել են, կոլտնտեսային մասսան այժմ իր թշնամին ե համարում: Ավելի ու ավելի մեծ թվով կոլտնտեսականներ սկսում են հանձնին լուղբերել ու գողերի տեսնել վատ բերքի ու աշխարին քիչ:

յեկամուտը ընկնելու աղբյուրը։ Ահա, դրանում են այն հաջողությունների կարեռագույն պատճառներից մեկը, վորոնց մասին յեն այստեղ դեկուցեցիք (բգկծումը մերն է)։
(ԽՍՀՄ Կենտգործկոմի 4-րդ նստաշրջանի ընկ. ՅԱԿՈՎ-ԼԵՎԻ գեկուցումից):

Այս տարվա տնտեսական հաջողությունները, վորոնք ձեռք են բերված կոլտնտեսությունների ամրապնդման ու բոլշևիկացման ապարիդում և այն հակայական բեկումը, վոր առաջացել ե կոլտնտեսականների մեջ գեղի կոլտնտեսական աշխատանքն ու ունեցվածքը, ապացուցում է այն, վոր ընկ. ՍՏԱԼԻՆի ցուցմունքը, կոլտնտեսական աղնիվ, նվիրված աշխատանքի մասին—զարձել և առաջավոր կոլտնտեսականների լավագույն զենքերից մեկը՝ կոլտնտեսությունն ամրացնելու, լողիքի, գողիքի, գոփողների դեմ պայցքարելու և զյուղատնտեսության լիակատար սոցիալիստական վերակառուցումը և, վերջին հաշվով, սոցիալիզմի հաղթանակը զյուղում ապահովելու համար։

1933 թ. ձեռք բերած հաջողությունները դեռևս չեն խոսում այն մասին, վոր կոլտնտշինարարության բնագավառում ամեն ինչ լավ ե, այլևս թերություններ չկան և կարելի յե միանդամյն հանգստանալ ձեռք բերած նվաճումներով։ Այսպես կարող ե մտածել միայն և միայն ոպղորտունիստը, կուլակի ագենտը, կոլտնտշինարարության ասպարիզում մենք դեռ ևս ունենք մի շարք լուրջ թերություններ։

Մեզ մոտ, Հայաստանում, մանավորապես լինային շրջաններում, գեռ ևս կան բավականին թվով կոլտնտեսություններ, վորոնք տնտեսապես և կաղմակերպչորեն զանդաղ տեմպերով են ամրապնդվում, 1934 թիվը պետք ե վճռական բեկում մտցնի նման կոլտնտեսությունների կյանքում և խորացնի 1933 թվին ստեղծված տնտեսական ու կաղմակերպչական բեկման արժատները, վիակատար ունենոր և կուլտուրական կյանք ստեղծելու համար։

Այդ պատճառով ել կոլտնտեսությունների կաղմակերպչական ու տնտեսական ամրապնդման, մանավորապես աշխատանքի ու արտադրության կաղմակերպման, դասակարգային բոլշևիկյան զգոնության բարձրացման խնդիրները պետք ե լինեն մեր ուշադրության կենտրոնում և կազմեն 1934 թվի մեր բոլոր աշխատանքների հիմնական առանցքը։

Կոլտնտեսությունների կաղմակերպչական-տնտեսական ամրապնդման, աշխատանքի ու արտադրության ճիշտ կաղմակերպման

բնականդարձությունն ու հիմնական հարցերն հետևյալն են.

1. Արտադրության միջոցների, տերիտորիայի ու կոլտնտեսականների ճիշտ գոսավորումը, բաշխումը մշտական բրիգադների մեջ։

2. Արտագրության միջոցների և աշխատունակ կոլտնտեսականների ճիշտ ու նպատակահարմար ոգտագործումը, գասավորումը բրիգադի ներսում (ողակների կազմակերպում, աշխատանքի բաշխումը ողակների միջև, գործիքների և այլ միջոցների բաշխումն և այլն):

3. Բանվորական որվա նպատակահարմար ոգտագործումը, նրա այնպիսի խտացում, վոր բանվորական որվա մեծ մասը ծախսվի արտադրական աշխատանքի համար։

4. Աշխատանքի վորակի ստուգման գործի ապահովումն, վորպես կոլտնտեսության արտադրության ներկա շրջանի կարեռագույն հարցերից մեկը։

5. Բարձրացնել արտադրության միջոցների արտադրողական նպատակահարմար ոգտագործման ու պահպանման գործը։

6. Ուժեղացնել պայքարը գիմազրկության, անպատճախանակության գիմ, վորպես արտադրությանը խարազանող գլխավոր վտանգներից մեկը թե՛ արտադրողական ուժերի ոգտագործման, թե՛ աշխատանքի վորակի բարձրացման և թե՛ զեկավարության կողմից պարտավորությունների կատարման բնագավառում։

Ահա այս բոլոր աշխատանքները հաջողությամբ կատարելու համար տարգուղ պայքարի կարեռագույն լծակներից մեկը՝ մշտական արտադրական բրիգադի ճիշտ կաղմակերպումն ե։

* * *

Այս գրքույթիում մենք աշխատել ենք մեր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա տալ կոլտնտեսական (գաշտավարական) արտադրության և մասնավորապես աշխատանքի մշտական բրիգադների կաղմակերպման հիմնական միքանի խնդիրներն ու նրա կաղմակերպման սկզբունքը։

Դրանույթը կազմելիս հիմնականում նկատի յենք ունեցել կոլտնտեսական միջին ակտիվիտի ու ագրո-տեխնիկավորության մեջ պահանջները։

ՀԵՂԻՆԱԿ

1. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՄՐԱՊՈՂՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Յերկրորդ հնդամյակում, հատկապես նրա յերկրորդ ու յերրորդ տարում կոլտնտեսական շինարարության ասպարիզում հիմնական ու հերթական խնդիրներից մեկը մնում է կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման խնդիրը, վորի առթիվ Համկոմկուսի կենտկոմի կոլտնտշինարարության մասին կայացված վորոշման մեջ ասված ե.

Կենտկոմն առաջարկում է կուս. կազմակերպություններին իրենց աշխատանքի կենտրոնը դարձնել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման խնդիրը... աշխատանքի կազմակերպումը, հաշվառքի գործի դրվագը, գործավարձի կիրառումը, պայքար աշխատանքի վորակի համար և այլն»:

(Համկոմկուսի կենտկոմի վորոշումից կոլտնտեսությունների կազմ.-տնտ. ամրապնդման մասին),

Ինչ ե նշանակում կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդում:

Այդ նշանակում ե.

Առաջին.—Կոլտնտեսությունը մաքրել այնտեղ խցկած դասակարգայնորեն խորթ, կուլակային, յենթակուլակային հակախորհրդային ելեմենտներից, վորոնք խցկել են և շարունակում են փորձել խցկել կոլտնտեսություն՝ իրենց քայքայիչ աշխատանքը տանելու, կոլտնտեսությունը տնտեսապես թուլացնելու, ներսից պայթեցնելու համար:

Յերկրորդ.—Դա նշանակում ե ճիշտ կազմակերպել աշխատանքը կոլտնտեսություններում, ստեղծել մշտական արտադրական կայուն բրիգադներ, կոլտնտեսության դաշտերը, գործիքները, անսառունները և բոլոր արտադրական միջոցները միքանի տարով (առնվազն 3—4 ա.) կցել մշտական բրիգադներին, իսկ այն կուտնատեսություններում, վորտեղ կիրառվում ե ցանքարջանառու-

թյուն, մշտական բրիգադները պետք ե կազմակերպել ըստ ցանքաշրջանառության տևողության, այսինքն ցանքարջանառության ամբողջ շրջանի համար:

Թե մեզ մոտ և թե վողջ Խորհրդային Միության մեջ բազմաթիվ կոլտնտեսությունների աշխատանքների ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր քաղաքականապես ուժեղ են, կազմ.-տնտեսապես ամուր են այն կոլտնտեսությունները, վորտեղ ճիշտ և ամուր հիմքերի վրա յե դրված աշխատանքի կազմակերպումն ընդհանրապես ու մշտական բրիգադների ու ներբրիգադային աշխատանքները՝ մասնավորապես:

Յեզ ընդհակառակը, թույլ ե, կուլակային պրովակացիայի նյութ և դառնում այն կոլտնտեսությունը, վորտեղ վատ և կազմակերպված աշխատանքը, չի կենսագործված կուսակցության ու կառավարության վորոշումը մշտական բրիգադների՝ հողի, անասունի և բոլոր տեսակի ինվենտարի կցման մասին:

Յերերդ.—Հիմնական արտադրական բրիգադներ ստեղծելու հետ միաժամանակ աշխատանքային ամուր սոցիալիստական կարգապահություն ստեղծելու խնդիրն ե։ Առանց աշխատանքային կուս կարգապահություն ստեղծելու, անհնարին և կոլտնտեսությունն ամրապնդել, անհնարին և մշտական արտադրական բրիգադների աշխատանքները կայուն և արդյունավետ հիմքերի վրա դնել։ Մի խնդիր, վորին կենինը շատ մեծ նշանակություն եր տալիս.

Դեռ 1919 թվին կենինը գրել ե.

«Առանձնապես մեծ ուշադրություն պետք ե դարձնել աշխատավորների ընկերական կարգապահության զարգացման ու ամրապնդման և նրանց ինքնազործունեյության ու պատասխանատվության գիտակցության համակողմանի բարձրացման վրա։ Դա կապիտալիզմի և արտադրության միջոցների մասնավոր սեփականության տիրապետության ստեղծած սովորությունների վերջնական հաղթահարման ամենագլխավոր, յեթե վոչ միակ միջոցն ե»։ (Լենին, —Հատոր 24, յերես 101):

Մի ուրիշ տեղ պետք ետքական դիկտատուրայի նվաճումներն ամրապնդելու առնչությամբ կենինը գրում ե.

«Պետք ե ամրացնել այն, ինչ մենք ինքներս ենք ձեռք բերել, ինչ ինքներս ենք գեկրետավորել, որինականացրել քնն արկել, նշել ամենորյա աշխատանքային կարգապահություն

թյան հաստատուն ձեռքով. դա ամենադժվարին, սակայն ամենաշորհալի խնդիր ե, քանի վոր միտյան նրա լուծումը մեզ կտու սոցիալիստական կարգեր»: (Լենին Հատոր 24, յերես 464).

Ահա թե ինչպիսի խոշոր նշանակություն ե տալիս Լենինը աշխատանքի սոցիալիստական կարգապահություն ստեղծելու գործին, ձեռք բերված նվաճումներն ամրացնելու՝ սոցիալիստական կարգեր ստեղծելու համար:

Մյուս հիմնական խնդիրը, դա՝ աշխատանքի սոցիալիստական ձեռքի կիրառման և աշխատանքների պրոցեսների մեքենայացման գուշընթաց աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդիրն ե:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդիրը վկայութիւնը կազմակերպչական միավանդման խնդիր ե, այլ և նա սոցիալիստական հասարակարգ ստեղծելու, այն ամրապնդելու և նրա վերջնական հաղթանակն առանձիւ խնդիր ե: Այդ և պատճառը, վոր Լենինը հսկայական նշանակություն ե տալիս մեղ մոտ աշխատանքի արտադրողականության խնդրին:

«Աշխատանքի արտադրողականությունը, դա վերջին հաշվով ամենակարևորն ե, ամենապլիսավորն ե, նոր հասարակարգի հաղթանակի խնդիրն ե»: (Լենին, Հատոր 24, յերես 322):

Չոր բորգ. — Կոլտնտեսությունների տնտեսական ու կազմակերպչուն ամրապնդելու հերթական խնդիրներից մեկն ել կոլտնտեսական կազմերի վորակի բարձրացման ու այդ կազմերի հոսունության վերացման խնդիրն ե: Մեծ և այն կոլտնտեսությունների թիվը, վորակի տարին միջանի անդամ փոխում են նախագահներին, բըիգագիրներին, հաշվապահներին և այլն: Դեկավար կազմերի հոսունության այս պրակտիկան միանգամայն անհանդուրժելի յեւ և խոշոր արգելք՝ կոլտնտեսության ամրապնդման գործին:

Կոլտնտեսական բոլոր աշխատողները և բոլոր կոլտնտեսականները լավ պետք ե ըմբռնեն, վոր «չկա վատ տնտեսություն, այլ կա վատ զեկավարություն» (ՍՏԱԼԻՆ): Ունենալ գործը հասկացող մարդկանցից կազմված վորակալ կայուն զեկավարներ, նշանակում ե ապահոված համարել տնտեսական-կազմակերպչական ամրապնդման գործը, իսկ հանդուրժել հոսունություն նրա կազ-

մում կնշանակի ձախողել, անհաջողության մատնել կոլտնտեսության ամբապնդման գործը:

Մյուս կողմից, վորպեսզի հնարավոր լինի այս բոլորն անշեղորեն կիրառել և ձեռք բերած նվաճումները խորացնել, շեղորեն կիրառել և ձեռք բերած նվաճումները առաջանալ ձեռք բերված նվաճումների վրա, եւ ավելի ուժեղացնել պայքարը դասակարգային թշնամու գեմ, նրա ազգեցությունից ազատագրել աշխատավորական մենատանտեսներին, նրանց (մենատանտեսների) սեփականությունը դարձնել մեր լավագույն կոլտնտեսականների նվաճումները, և կոլտնտեսական կարգերի հաջողությունների հիման վրա՝ նոր վեհելք ստեղծել գեպի կոլտնտեսությունները, հիմք ընդունելով այս, վոր մեր կոլտնտեսությունների մեծ մասն այնքան են աճել ու ամրացել, վոր այսուհետև ազատ կերպով կերպող հարող են ընդունել, մարսել աշխատավորական նոր տնտեսություններ:

Այս տարվա հաջողությունները ցույց են տալիս, վոր միելյոնավոր կոլտնտեսականներ ՄՏԿԱյանների քաղ. բաժինների անմիջական ղեկավարությամբ իրենց համառ, բարեխիղուց ու նվիրված աշխատանքի շնորհիվ ստեղծում են նոր, բարեկեցիկ կյանք, նրանք ունենոր են դառնում, սկսում են ապրել այնպես, ինչպես պետք է ապրի մարդք. ընկ. ՍՏԱԼԻՆի այն խոսքերը, թե «մեր մոտակա խնդիրն ե» ունենոր զարձնել բոլոր կոլտնտեսականներին», արդեն իրական գործ է դառնում: Յեկ այդ և պատճառը, վոր պյուղաշիական աշխատավորական լայն մասսաները, կոլտնտեսական կարգերի հաջողությունների հիման վրա ավելի խորը համոզկան կազմերի հաջողությունների համար վեցին, վոր «կոլտնտեսական ուղին, սոցիալիզմի ուղին—միակ գործին և ախտավոր գյուղացիների համար» (ՍՏԱԼԻՆ):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Կոլտնտեսական աշխատանքի ձիա կազմակերպումը հանդիսանում է ամենահիմնական ու կարևոր նախագրյալներից մեկը՝ կոլտնտեսության արտադրության սացիոնալ և նպատակահարմար կոլտնտեսության արտադրության սացիոնալ և նպատակահարմար կողմակերպման համար: Յեկ յեթե «նոր, սոցիալիստական հաշվակարգ ստեղծելու խնդրում ամենակարենը—դա աշխատանքի մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացումն ե», ապա կոլտնտեսության արտադրողականության բարձրացումը իր հերթին անմիջականորեն կապված ե աշխատանքի վարձարացումը իր հերթին անմիջականորեն կապված ե աշխատանքի վարձարացման գործավարձային սիստեմի հետ, իսկ կիրառել գործավարձ, հաշվի

առնել յուրաքանչյուր աշխատանք, առանց հաշվառքի ամուր ու ճիշտ դրվագի, առնարին ե:

Ի՞նչ ե նշանակում աշխատանքի ճիշտ կազմակերպում—հաշվառում:

Աշխատանքի ճիշտ կազմակերպում նշանակում ե վոչ միայն կոլտնտեսության բանվորական ուժի դասավորումը արտադրության մեջ, կամ բոլոր կոլտնտեսականների լրիվ ոգտագործումը արտադրության մեջ, այլ և նա միաժամանակ և հիմնականում նշանակում ե կոլտնտեսության վողջ աշխատանքը թե արտադրության մեջ և թե արտադրությունից դուրս այնպես կտավակերպել, վոր հնարավոր լինի ճշտությամբ, լրիվ ու ժամանակին կատարել պրոլետարական պետության բոլոր առաջադրանքները, կոլտնտեսության արտադրության բարձրացման, կոլտնտեսությունների հարստացման և նրա սոցիալիստական վերադաստիարական ասպարիգում, մի խոսքով լիովին ապահովել գուղի լիակատար սոցիալիստական վերակառուցումը:

Հիմնականում աշխատանքի հաշվառումը հետապնդում ե յերկու գլխավոր նպատակ.

Առաջին.—Վորպեսզի կոլտնտեսություններում հնարավոր լինի ճիշտ կազմակերպել աշխատանքն ու բարձրացնել նրա արտադրողականությունը, ապա յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք ե ունենա իր բոլոր աշխատանքների և միջոցների լրիվ պատճերը, այսինքն՝ ինչ ունի կոլտնտեսությունը և ինչ արտադրական առաջադրանք ե ստացել վիրքան ե կոլտնտեսականների թիվը, վորից տղամարդ, կին և վիրքանը պատահի: Այս հաշվառումն ունենալուց հետո պետք ե պարզել, թե այդ քանակությունից վիր մասը կարող ե անմիջապես մասնակցել կոլտնտեսության արտադրության աշխատանքներին և վիր մասը այլ աշխատանքներին:

Երրորդ.—Աշխատանքի հաշվառում նշանակում ե ճիշտ կերպով հետեւ կոլտնտեսությունում կատարվող բոլոր աշխատանքներին, ստուգել թե վորակապես և թե քանակապես ճիշտ կերպով գնահատել այն, հաշվել կոլտնտեսականին հասանելիք աշխարերը և ժամանակին, հինգ որը մեկ անգամ կոլտնտեսության հաշիվներում, նույնպես և կոլտնտեսականի աշխարքույկում կատարել համապատասխան գրանցումներ:

Հաշվառման այս վերջին խնդիրն ամենակարևորն ե, վորով հետև սրանից ե բղխում կոլտնտեսության հետագա բոլոր աշխա-

տանքները, ինչպիսին ե ավանսավորումը, և վերջին հաշվով կուտնականության ամբողջ յեկամտի թե նախնական և թե վերջնական բաշխումը, վորն իր հերթին հանդիսանում ե կոլտնտեսության տնտեսական կազմակերպչական ամրապնդման աշխատանքների հիմնական լծակներից մեկը:

Ամուր և կազմակերպչորեն ուժեղ ե այն տնտեսությունը, վորտեղ լավ հիմքերի վրայ յե դրված և բոլոր միջոցների հաշվառքը: Կանոնավոր հաշվառքը—աշխատանքի ճիշտ կազմակերպման ու յեկամտի՝ ըստ սցիուրերի բաշխման հիմնական նախադրյալն ե: Առանց հաշվառքի կոլտնտեսությունը նման ե դուռ չունեցող տան:

Կոլտնտեսություններում հաշվառման աշխատանքները չեն, սահմանափակվում միայն աշխատանքի, գույքի և այլ միջոցների հաշվառումով, այլ նա պետք ե լինի պայքարի ամենորյա ուժեղ զենք, ստուգման ու հսկման միջոցով կանոնավորել կոլտնտեսության բոլոր տեսակի աշխատանքները, ժամանակին վերացնել նկատված թերությունները, բարձրացնել աշխատանքի դիսցիլինան և մյուս կողմից՝ հսկել, պահպանել կոլտնտեսային սեփականությունը:

Բացի դրանից, ճիշտ կազմակերպված հաշվառումը մի ուժեղ զենք ե տնտեսության ղեկավարի ձեռքին՝ տնտեսության աշխատանքները պլանավորելու և այն խելացիորեն ղեկավարելու համար:

Առանց տնտեսության բոլոր միջոցների ու հնարավորությունների ստույգ հաշվառման վճի մի ղեղավար չի կարող լրիվ կերպով պատճերացնել տնտեսության առաջ կանգնած թե որվա և թե ապագա խնդիրները: Յեկնա միանգույնա անկարող կինի պատճերը կազմակերպել և դնել այնպիսի հունի մեջ, վոր աշխատանքները կարելի լինի տնտեսության բոլոր հնարավորություններն ու միջոցներն լրիվ ոգտագործել հոգուտ կոլտնտեսականների կյանքի բարելավման, պրոլետարական պետության առաջադրանքների կատարման, գյուղի սոցիալիստական վերակառուցման ու կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման գործում:

3. ՄԵՏԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀՄՄԱԿԱՆ ԼԾԱԿՆ Ե

«Կոլտնտեսության ամբողջ արտադրությունը կախված է բրիգադի աշխատանքից — գարնանացանի և բերքի բարձրացման հաջողությունները վորոշում են բոլորում» (Հարվածային կուտնահականների առաջին համագումարի կոչեց):

Կոլտնտեսություններում բոլոր աշխատանքների կազմակերպման, արտադրության և աշխատանքի արտադրողականության բարձրացման, պետական առաջադրանքների կատարման, մի խոսքով՝ կոլտնտեսությունների քաղաքական, տնտեսական ու կազմակերպչական ամրապնդման գործում հիմնական ողակներից լծակներից մեկը, դա մշտական բրիգադն ե:

Յեկ ընդհանրապես մշտական բրիգադի կաղմակերպվածությունից, նրա ներսում կատարվելիք աշխատանքների գասավորումից, բանվարական ձեռքերի, քաշող ուժի, ինվենտարի գասավորումից ու նրանց նպատակահարմար ոգտագործումից կախված ե թե բրիգադի և թե կոլտնտեսության բոլոր աշխատանքների հաջողությունները:

Կոլտնտեսությունների զարգացման ներկա լրջանում, յերրինդիր և գրված ամրացնել ձեռք բերված նվաճումները, խոշորացնել, կոլտնտեսություններն ուժեղացնել տնտեսապես, խորացնել գործավարձը, յեկամտի բաշխումն ըստ աշխարերի սկզբունքը և այլն, ապա, այդ գեպքում ամենախոշոր վտանգը, վորը կարող ե տապաւել կոլտնտեսության ամբողջ գործը և նրա առաջ գրված խնդիրները — դա հանդեպ կոլտնտեսության աշխատանքին ու հարստությակը ցուցաբերած անհոգի, անպատասխանափու և դիմագուրկ վերաբերմունքն ե:

Այն կոլտնտեսություններում, վորոնել բացակայում ե հոգաւտար և պատասխանատու վերաբերմունք գեպի կոլտնտեսական գործն ու ունեցվածքն, ապա նման կոլտնտեսությունը յերբեք չի կարող ամրանալ յերբեք չի կարող զառնալ բոլեկիկան ամուր հարված-բռունցք՝ հաջողությամբ պայքարելու կուլակության, զասակարգային թշնամու գեմ:

Իսկ այդ բոլորը պայմանավորված ե նրանով, թե ինչպես ե տվյալ կոլտնտեսությունը կազմակերպել իր աշխատանքները և

ինչպիսի մեթոդներով ե նա պայքարում անպատասխանատվության, դիմագրկության, հասարակական գույքը հափշտակողների, գովողողների դեմ:

Դիմագրկության, անպատասխանատվության դեմ պայքարելու, բարձր բերք ստանալու, աշխատանքների վորակական և քանակական ցուցանիշների կատարումն ու ստուգումն ապահովելու, մի խոսքով՝ կոլտնտեսությունն ամրապնդելու միակ հիմնական միջոցը մշտական բրիգադն ե, ինչպես դա հիմնալի կերպով ասված և Համկոմկուսի կենտրոնի 1932 թ. փետրվարի 4-ի հայտնի վորոշման մեջ»:

«Գյուղատնտեսական լավագույն արտելների փորձի հիման վրա կենտրոնը նպատակահարմար ե համարում կաղմակերպել կոլտնտեսական բրիգադներ, կոլտնտեսականների մշտական կազմով, այն հաշվով, վոր այդ բրիգադները, վորապես կանոն, զուղղատնտեսական հիմնուկան աշխատանքներ ամբողջ տարբա ընթացքում կատարեն. վորոց հողակորներում: Կոլտնտեսությունները բրիգադներին նրանց աշխատանքի ժամանակամիջոցին հատկացնում են անհրաժեշտ մեքենաներ, ինվենտար, լծկան, վորոնց զբության համար ամբողջին պատասխանատու յի բրիգադան» (Համկոմկուսի 1932 թ. 4 փետրվարի վորոշումից):

Վորն ե այդ վորոշման հիմնական առանցքը. այն, վոր աշխատունակ կոլտնտեսականների վորոց խմբակը, ներկա գեպօւմ բրիգադը պետք ե ամբողջովին պատասխանատու լինի իրեն հանձնված կոլտնտեսության վորոց աշխատանքի թե վորակական և թե քանակական ցուցանիշների լրիվ, ժամանակին կատարելու և իրեն հանձնված ինվենտարի պահպանման գործի համար:

Ըսկ Յակովիկը կը ՅԱՀՄ կենտրոնական 3-րդ նստաշրջանում խոսելով կոլտնտեսությունների ամրացման և բերքի բարձրացման խոսելով կոլտնտեսությունների մասին, ընդգելով մշտական բրիգադների անելիքները և բերքի բարձրացման գործում, տալով նրանց գնահատականը, հետեւյալն ե ասում:

«Յերկրորդ լծակը, վոր մենք պետք ե գործ գնենք բերքատվությունը բարձրացնելու նպատակով — դա մշտական բրիգադն ե: Փորձն ամբողջությամբ հաստատեց մշտական բրիգադներ կազմակերպելու մասին կուսակցության կենտրոնական կոմիտեյի 1932 թ. փետրվարի 4-ի վորոշման ճշությունը: Այն բոլոր աեղերում, ուր բրիգադները կազմվել են հաշվի առնելով կոլտնտեսականի ընակագայրը, ուր

բրիգադի անգամները տեղի-անտեղի վարչության կողմից չեն տեղափոխվել մի տեղից մյուս տեղը, ուր բրիգադի աշխատանքը կապված է յեղել տրակտորի աշխատանքի հետ, այնտեղ մշտական բրիգադների կիրառումը դրական արդյունք և տվել:

Բայց այդ դեռ ևս չի նշանակում, վոր մշտական բրիգադներ կազմակերպելով խնդիրը սպառվում է և կոլտնտեսություններում աշխատանքը կարող է լավ ընթանալ: Մշտական բրիգադը յերկար գոյություն ունենալ չի կարող, յեթե նա կազմակերպված չե արտադրական սկզբունքով և նրան ցանքաշրջանառության բոլոր դաշտերից կցված չեն հողակտորներ: Մշտական բրիգադի աշխատանքների հաջողությունը կախված է նրանից, թե ինչ սկզբունքով և կազմակերպված բրիգադը:

4. ՎՈՐՆ Ե ՄՇՏԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Այս հարցը կոլտնտեսական արտադրական մշտական բրիգադի կազմակերպման և նրա կազմի վորոշման խնդրում հանդիսանում է ամենակարևոր և վճռական հարցերից մեկը:

Ի՞նչո՞ւ:

Վորովիճետև այն դեպքում, յերբ բրիգադը կազմակերպված է սխալ, վոչ արտադրական սկզբունքով և բրիգադի կազմը վորոշել են առանց ապահովելու բրիգադին տրվելիք արտադրական առաջարկանքի կատարման համար անհրաժեշտ աշխատավորական ձեռքբերի պահանջը, ապա անկախած ե, վոր դաշտային աշխատանքների ընթացքում բրիգադի կազմն անպայման կյենթարկվի փոփոխման, իսկ գյուղատնտեսական աշխատանքների յեռուն ըլջանում նորից զբաղվել աշխատանքների կազմակերպման, բրիգադների վերակառուցման գործով, ինչպես ցույց է տվել փորձը, կնշանակի վտանգել ամբողջ կոլտնտեսության և մասնավորապես բրիգադի առաջարկանքի կատարումը:

Կարճ. ինչումն է կայանում սխալը, վոչ ճիշտ սկզբունքի ելությունը, — նրանում, վոր առաջին հերթին կոլտնտեսությունում յեղած բանվորական ուժը մեխանիկորեն բաժանում են հավասար խմբերի, բրիգադների և ապա այդ խմբին — բրիգադին հանձնում կոլտնտեսության աշխատանքների վորոշ մասը: Որինակ՝ յեթե կոլտնտեսությունն ունի 200 աշխատավորական ձեռ-

քեր և յենթադրենք նպատակահարմար և ունենալ հինգ բրիգադ, ապա այդ 200-ը բաժանում են 5 հավասար մասերի և կազմում 40-ական հոգուց բաղկացած բրիգադաներ, իսկ 2-րդ հերթին բաժանում ցանքի տարածությունը և վողջ աշխատանքները, այսպես կոչված, բրիգադների միջոցով:

Վերն և աշխատանքի կազմակերպման նման ձևի չարիքը Այս ձևով բրիգադներ կազմակերպել կնշանակի նախորդք համաձայնվել, վոր բրիգադում կարող ել լինել բանվորական ուժի ավելցուկ կամ պակաս, իսկ թնչ ե նշանակում բրիգադում ունենալ բանվորական ավելորդ ուժ, քան նրա պահանջն ե: Այդ նշանակում և համաձայնվել աշխատանքները բուքսիրային սիստեմով կատարելու սկզբունքի հետ, իսկ թե բուքսիրային աշխատանքը բնչպիսի չարիք և և բնչ ֆլամեներ և հասցնում կոլտնտեսության արտադրությանը, այդ մենք կտեսնենք հետագայում՝ Ն. Գյողալդարյի և Սարգսրաբատի կոլտնտեսությունների որինակից:

Կոլտնտեսության աշխատանքներում համաձայնվել աշխատանքի բուքսիրային սիստեմի հետ, նշանակում և համաձայնվել և թույլ տալ, վոր արտադրության մեջ տիրի հոսունություն, անպատասխանատլություն: Բայց չե վոր անպատասխանատլությունը, հասունությունն ամեն ժամ, ամեն բողեքում են դիմագրկություն հանգեց կոլտնտեսության բոլոր տեսակի աշխատանքների և նրա ունեցվածքի: Իսկ թե դիմագրկությունն թնչ պիսի գեր և խաղում կուլտնտեսության տնտեսական ամրապնդման գործում, այդ գեղեցիկ և պարզ կերպով բնորոշված ե ընկ. ՍՏԱԼԻՆԻ անտեսավարների խորհրդակցությունում ունեցած յերույթում: —

«Դիմագրկություն՝ դա վորեն պատասխանատվության բացակայություն և, դիմագրկությունը՝ դա արտադրության խարազանողն ե»:

Կամ ավելի պարզ՝

«Դիմագրկության դեպքում վորեն լուրջ խոսք աշխատանքի արտադրողականության վերելքի, արտադրանքի վորակի լավացման և մեքենաներին, դադարիաներին խնամքով վերաբերվելու մասին լինել չի կարող»:

Յեվ այսպես, ինչպես տեսանք, վերոհիշալ սկզբունքով մըշտական բրիգադներ կազմակերպելը հիմնականում հակասում է Համկոմկուսի կենտրոնի 1932 թ. վետրվարի 4-ի վորոշման այն մասին, վորտեղ անված ե: —

«Կազմակերպել կոլտնտեսական բրիգադները, կոլտըն-

տեսականների մշտական կազմով այն հաշվով, վոր այդ բըթ-
գագները, վորպես կանոն, գյուղատնտեսության հիմնական
աշխատանքներն ամբողջ տարվա ընթացքում կտտարեն վո-
րոշ հողամասերում»:

Այսինքն, թույլ չտալ բուքսիրային աշխատանք, կամ տե-
ղափողություններ մի դաշտից մյուսը և վերջին հաշվով, այդպի-
սի բըթգագն յենթարկվելով հաճախակի փոփոխումների, կղա-
ղաքի մշտական լինելուց և կղառնա կոլտնտեխականների մի
խումբ, վոր ամեն որ աշխատելով տարբեր դաշտերում, իրեն պա-
տասխանատու չի զգա վորեե աշխատանքի վորակի համար, բեր-
քի բարձրացման համար և, վերջապես, չի զգա և վոչ մի պա-
տասխանատվություն հանդեպ կոլտնտեսության աշխատանք-
ների:

Այս վժըն և այն ճիշտ սկզբունքը, վորով պետք և դեկա-
վարվեն մեր կոլտնտեսություններն արտադրական մշտական բըթ-
գագներ կազմակերպելիս և նրանց կազմը վորոշելիս:

Մեզ համար միակ և ճիշտ սկզբունքը—դա արտադրական
սկզբունքն է, վոր ճիմականում բիշուում և կոլտնտեսության բո-
լոր տեսակի պահները կատարելու, աշխատանքի սոցիալիստա-
կան դիստիպլինա ստեղծելու, նրա արտադրողականությունը բար-
ձրացնելու, պրոլետարական սկիտության բոլոր տեսակի առա-
ջադրանքները, պարտավորությունները լրիվ ու ժամանակին կա-
տարելու, կոլտնտեսության աշխատավոր ձեռքերը, լծկանը և
զյուղգործիքները լրիվ ու նպատակահարմար ոգտագործելու, ար-
տագնացություն կազմակերպելու և, իվերջո, կոլտնտեսության
կազմակերպչական-տնտեսական բազան ամրապնդելու շահերից:

Ինչ և նշանակում արտադրական սկզբունք և ինչպես այն
կիրառել գործականում, կոլտնտեսական արտադրության մեջ
մշտական բըթգագներ կազմակերպելիս:

Արտադրական սկզբունքով կոլտնտեսական մշտական բըթ-
գագներ կազմակերպել, կնշանակի առաջին հերթին կազմակեր-
պել կոլտնտեսության աերթուրիան, շրջողբաժնի կողմից արված
արտադրական առաջադրանքի համաձայն կատարել կոլտնտեսու-
թյան դաշտերի դասավորումը, դրանից հետո վորոշել բըթգագնե-
րին հանձնվելիք արտադրական հոգամասերի քանակությունն այն
հաշվով, վոր յուրաքանչյուր բըթգագում լինի մեկ կամ յերկու հիմ-
նական կոլտնտեսության այնքան ոժանդակ կոլտնտեսության կամ այլ աշխա-
տանք, վոր հնարավոր լինի ստեղծել բըթգագնի հավասարաչափ ծան-
րաբեռնվածություն գյուղատնտեսական ամբողջ տարվա ընթաց-

քում այն հաշվով, վոր բըթգագների կազմը 45—50 հոգուց չանց-
ցնի (նայած կոլտնտեսության աշխատանքի պայմանների ա-
ռանձնահատկությանը), վորովհետև ներկա պայմաններում խիստ
դժվարանում և ղեկավարությունը, յերբ բըթգագնան այդ ծավա-
ռել մեծ ե, և ավելի վատ, յերբ այդպիսիք կազմակերպվում են
15—20 հոգուց բաղկացած:

Բըթգագնի արտադրական հոգամասը չպետք և բաղկացած
լինի մնխանիկորեն առանձնացված, անջատված, իրար հետ վոչ
մի կապ չունեցող ու ցրված հողակտորներից. նման դրությունը
կարող և խիստ կերպով աղղել դաշտերի բերքատվության ու
աշխատանքի վորակի ու մեքենայացման վրա: Իսկ մշտական
բըթգագնի հիմնական նպատակն և մշտական կցված հողամասում
ճիշտ և նպատակահարմար կերպով կիրառելով բոլոր տեսակի
անհրաժեշտ ագրոձեռնարկումներն ու աշխատանքների հնարավոր
մեքենայացումով բարձրացնել աշխատանքի արտադրողականու-
թյունը և կոլտնտեսական դաշտերի բերքատվությունը, խնայո-
ղաբար ոգտագործել կոլտնտեսության բոլոր միջոցները, գործիք-
ները, բանող անսառունները, սերմացուն և այլն:

Բըթգագների արտադրական առաջադրանքի ծավալը վորո-
շելիս միանգամայն անթույլատրելի յև մեխանիկորեն կիրառել
հավասարեցումը և բուռը բըթգագներին տալ հավասար աշխա-
տանքները: Յերբեք պարտադիր չե, վոր բոլոր բըթգագներում
հավասար քանակության աշխատանք և մարդկային կազմ լինի:
Մի բըթգագն կարող և ունենալ 120 հեկտար ցանքի տարածու-
թյուն, իսկ մի ուրիշը՝ 140 հեկտար և դրան ել համապատասխան
աշխատող ձեռքերը: Այս չի վերաբերում ցանքաշրջանառություն
ունեցող կոլտնտեսություններին, վորովհետև այդ գետքում դաշ-
տերն անպայման պետք և հավասար լինեն: Բըթգագնի արտա-
դրական առաջադրանքի ծավալի չափը կախված ե տվյալ կոլտըն-
տեսության ուղղությունից, դաշտերի առանձնահատկությունից
և աշխատանքների պայմաններից:

Կերպից այս բոլոր պայմանները նկատի ունենալով
կոնկրետ կերպով բըթգագների կազմակերպմանն անցնելու համար
անհրաժեշտ և պետք և ձեռքի տակ ունենալ հետեւալ նյութերը՝

1. Ծրջանային հողային բաժնի կողմից տվյալ կոլտնտե-
սությանն առաջադրված արտադրական առաջադրանքը.
2. Կոլտնտեսության հողերի պլանն ըստ տարածություն-
ների և դրանց բնութագիրը.

3. Յանքաշրջանառության սխեման, յեթե այդպիսին կիրառվում ե.

4. Կոլտնտեսության ընդհանուր ժողովի կողմից հաստատված և ստուգված արտադրական նորմաները.

5. Կոլտնտեսության աշխատավորական ձեռքերի քանակությունը, վորից՝ տպամարդ, կին և պատանի, և ապա ցույց տալ, թե այդ քանակությունից վոր մասն և մնում կոլտնտեսության մեջ՝ անմիջապես արտադրության աշխատանքներին մասնակցելու համար և ինչ մասնագիտություն ունեն նրանք.

6. Մեքենատրակտորային կայանի կողմից կոլտնտեսությունում կատարվելիք աշխատանքների պլանը, յեթե այդպիսին կոլտնտեսությանն սպասարկում ե.

Սյս բոլոր անհրաժեշտ տվյալները ձեռքի տակ ունենալուց հետո, նկատի ունենալով գյուղատնտեսական աշխատանքի սեղոնները և փաստական աշխատանքյին որինենակիր թիվը տվյալ սեղոնում յելնելով աշխատանքների կատարման ժամկետների՝ որերի քանակությունից, վորոշում ենք բրիդադի որական կատարվելիք աշխատանքի ծավալը և նրա կատարման համար անհրաժեշտ աշխատող ձեռքերի, քաշող ուժի, զյուղատնտեսական գործիքների, մեքենաների և այլ միջոցների պահանջը. Դրանից հետո հիմք ընդունելով տվյալ սեղոնում բրիդադի տվյալ ծանրաբեռնվածության որվա համար պահանջվող աշխատավորական ձեռքերի, քաշող ուժի, գործիքների և այլ միջոցների քանակությունը, վորոշում ենք բրիդադի կազմը տվյալ սեղոնի համար:

Սյսպիսի հաջիվեր կատարելով գյուղատնտեսական բոլոր սեղոնների վերաբերեամբ, ինչպիսիք են գարնանացանի, բերքահավաքի, աշնանացանի աշխատանքները և այլն, բոլոր սեղոնների տվյալները մշակելուց հետո, այդպիսիք համեմատելով իրար հետ, դուրս ենք բերում, մշտական բրիդադի տարեկան կազմը, հիմք ունենալով ամբողջ տարվա ընթացքում բրիդադի ամենամեծ ծանրաբեռնվածության շրջանը:

Սյստեղ հարց ե առաջանում, յեթե մենք մշտական բրիդադի կազմը վորոշում ենք՝ յելնելով բրիդադի ծանրաբեռնվածության տմենամեծ շրջանից, հետեւաբար քիչ ծանրաբեռնվածության շրջանում (իհարկե այդպիսիք քիչ չեն լինի) բրիդադի վորոշ անդամներ պետք ե անգործ մնան կամ գնան ուրիշ բրիդադներ աշխատելու և կամ կազմակերպեն արտագնացություն:

Կոլտնտեսական աշխատանքների ներկա պայմաններն ու

գյուղատնտեսական աշխատանքների բնույթը նման յերեսույթ անպայման կ'ստեղծնն, այդ անխուսափելի յե, բայց և հնարավոր և այդ դրությունն ոգտագրեթել հոգուտ կոլտնտեսության ամբապնդման, այդ գեղքում պետք ե աշխատել բրիդադին կցել փոքր ծավալով այնպիսի ոժունդակ աշխատանք, վորը հնարավոր լինի կատարել հենց բրիդադի այդ քիչ ծանրաբեռնվածության շրջանում: Որինակ՝ բամբակացան և ծխախոտացան շրջաններում բրիդակի և ծխախոտի հետ տրված ե հացահատիկ կամ խոտաբույս: Նրանց հոգերի վարը և կը կնավարը կատարում են միասին: Հացահատիկի ցանքը կատարում, ջրում, վերջացնում են և ապա սկսում բամբակի կամ ծխախոտի ցանքը: Էամբակի մշակմանը զուգընթաց հացահատիկը ջրում են: Բամբակի 3—4 քաղցանն ավարտելուց հետո սկսում են հացահատիկի և խոտաբույսի քաղցն ու: Կալմումը, դա վերջացներուց հետո ամրողովին նվիրվում են բամբակի վերջին քաղցաննին, ու բերքահավաքին: Սյս մեծ հաջողությամբ կիրառվում ե մեր շատ կոլտնտեսություններում, ինչպես Վաղարշապատի, Աբրաթի, Ղուրդուղուլու, Իջևանի ու մի շարք այլ կոլտնտեսություններում: Սակայն գյուղատնտեսական աշխատանքները խորոք չափով և գիշավորապես կախված են կլիմայական պայմաններից: հաճախ այդ հանգումանքը սահմանում է կամ վորոշ պարապուրդներ, կամ մեծ ծանրաբեռնվածություն: Իհարկե, այդ անխուսափելի յե: Նման գեղքերում աշխատավորական ազատ ձեռքերի ոգտագործումը կամ պակասը ճիշտ կերպով կարող ե ոգտագործել հմուտ, փորձագագագչի ջանքերով:

Վորովինետն ըրիդադի կազմը մենք վորոշում ենք յելնելով աշխատանքների ծանրաբեռնվածության ամենածանր շրջանից, հետեւաբար, բրիդադում բանվորական ուժի պակասի խնդիրը ինքնատինֆյան վերանում ե: Մնում ե, միայն վորոշ սեղոններում, ավելորդ բանութի ոգտագործման խնդիրը: Այդ գեղքում պետք ե անպայման ձևադրկել սեղոնային արտագնացության կազմակերպման: Այսինքն, բրիդադում պետք ե թունել այնքան աշխատողներ, վորքան պահ ոնչում ե գործը, իսկ ավելցուկ բանութը՝ պայման սվորվելով վորոն շինարարության կամ գործարանի հետ, կազմակերպված ձեռք վորոշ ժամանակով գուրս բերել աշխատանքի:

Ոգտագելով առիթից անհրաժեշտ և մի խնդրի վրա ևս կանգ առնել, մեր գիտադությունները բազմաթիվ կոլտնտեսություն-

ներում ցույց են տալիս, վոր ծանրաբեռնվածության ամենածանր շրջանը դա քաղի շրջանն է, յերբ բանկորական ուժի պահանջը կրկնապատկում է և մեծ անհամաշափություն ստեղծում բրիգադի ծանրաբեռնվածության դրաֆիկում:

Այս շրջաններում, վորտեղ հնարավոր է քաղի աշխատանքների մեքենայացումը, բավական և նման կոլտնտեսությանը տալ մեկ հնձող մեքենա, վորպեսզի այդ անհամաշափությունը մեծ չափով վերանա:

5. ԽՆՉՈՒՄԻ ԲՐԻԳԱԴՆԵՐ ՊԵՏՔ Ե ԿԱԶՍԱԿԵՐՊԵԼ

Յելելով կոլտնտեսությունների կազմ.-տնտ. ամրապնդման պահանջներից, տնտեսապես ձեռնուու յե ունենալ բազմակուլտուր բրիգադներ, վորովինեակ այդ դեպքում մեզ հաջողվում է լուծել բրիգադի աշխատանքների հավասարաշափ ծանրաբեռնվածության և գյուղատնտեսական ինվենտարի ու լծկանի ռացիոնալ ոգտագործման խնդիրները, այդ այն դեպքում, յերբ մենք բրիգադին տալիս ենք մեկ հիմնական և մի քանի ոժանդակ կուլտուրաներ, վորոնց մշակման ցշանն անդայման համատեղվում է հիմնական կուլտուրայի մշակման շրջանի դադարի հետ:

Իսկ այս դեպքում, յերբ բրիգադները կազմակերպվում են ըստ առանձին կուլտուրաների, ապա ստացվում է այնպիսի դրություն, վոր տվյալ կուլտուրայի մշակման վերաբերյալ բոլոր աշխատանքները կատարելուց հետո այդ բրիգադն այլևս անելիք չի ունենում, և նույնիսկ այդ աշխատանքների ժամանակամիջոցումն ել նա կարող և մեծ քանակությամբ պարապուրդներ ունենալ:

Վորպեսզի ցույց տանք, թե կոլտնտեսության արտադրությանը ինչպիսի հսկայական քասաներ ե հասցնում ըստ առանձին կուլտուրաների բրիգադներ կազմակերպելը և թե ինչպիս ե այդ յերկույթը անդրադառնում մշտական բրիգադների կազմի փոփոխման ու արտադրական առաջադրանքների կատարման վրա, վերցնենք Սարդարաբատի «Լինինաշեն» կոլտնտեսության աշխատանքների կազմակերպման որինակը:

Սարդարաբատի կոլտնտեսությունն ունի 500 տղամարդ, 512 կին և 56 պատանի աշխատող ձեռքեր: կոլտնտեսության 1933 թ. ցանքի պլանն է 600 հեկտար բամբակ, 436 հեկտար հացահատիկ, 243 հեկտար խոտաբույսեր և 26 հեկտար այլ կուլ-

տուրաներ: Կազմակերպված են 29 մանր՝ 25—30 հոգուց բաղկացած բրիգադներ, վորից՝ 20 բամբակացան, 3 հացահատիկային, 2 առվույտի, 1 բոստանի, 1 անասնապահական և 1 շինարարական:

Ինչպես անսնուու ենք, այստեղ, հակառակ կուսակցության և կառավարության կողմից յեղած մի շարք ցուցումների այն մասին, վոր բրիգադները պետք է կազմակերպել այնպես, վոր նրանք կոլտնտեսության ցանքաշրջանառության բոլոր գաշտերից (տարբեր կուլտուրաներից) ստանան հողակտորներ այն հաշվով, վոր չստեղծվի հողացրվածություն և հնարավորություն արվի ավելի ուսցիոնալ կերպով կազմակերպել կուտնաեսության տերիտորիան և ամբողջ տարվա ընթացքում հավասարաչափ ոգտագործվի բրիգադի բանվորական ուժն ու բոլոր հնարավորությունները:

Այսպիսի գրություն կարելի յե ստեղծել միայն և բացառապես այն գեպքում, յերբ բրիգադին տրված առաջադրանքում կառանձնացնենք 2—3 այնպիսի կուլտուրաներ, վորոնց մշակման աշխատանքները վոչ թե համատեղվեն, այլ հաջորդեն միամյանց

Այժմս մեկ բրիգադի որինակու կոնկրետ կերպով ցույց տանք, թե ինչպիս և աշխատել վերոհիշյալ կուտնաեսությունը վերցնենք ցորենի և 21, ընկ. Հովսեփ Վարդանյանի բրիգադը:

Այս բրիգադը կազմակերպվել է 1933 թվին, բաղկացած է յեղել 17 աղամարդուց և ունիցել է 124 հեկտար ցորենի ցանք, վորն ամբողջությամբ կենտրոնացած է մեկ դաշտում:

1. Ցանքի ժամանակ բրիգադն իր ուժերով չկարողանալով ամբողջ աշխատանքներն ընդորելու, նրան ուրիշ բրիգադից լրացուցիչ կցում են 83 հոգի, վորպեսզի հնարավոր լինի սահմանված ժամկետին ավարտել բրիգադին տրված առաջադրանքը: Սակայն հետագայում պարզվում է, վոր կցված կուլտնտեսականները այս բրիգադի աշխատանքների համար իրենց պատասխանատու չեզուցով, 12 հեկտար ցանքը կատարել են անվորակ, վորն ամբողջովին փաշցել է. 25 հեկտար վատ մարկոսելու հետեանքով ջուրը չի բարձրացել ու բներքը 50 տոկոսով պակաս և ստացվել բրիգադի կազմի անընդհատ հոսունության, ինչպիս նաև այդ կազմի խիստ ծանրաբեռնվածության հետեանքով աշնանացանն ուշացել ե 40 հեկտար ցանքել են նոյեմբերի 15—20-ին, վորի հետեանքով բերքը նույնպիս ընկել ե զգալի չափով: Մնացած տարածությունը նույնպիս ընկել է զգալի չափով:

թյունը, վորը խնամել ե բրիգադի մշտական կազմը, յուրաքանչյուր հեկտարից բերք ստացել ե 15 ցենաների սահմաններում ծանքի աշխատանքներն ավարտելուց հետո բրիգադը ցրվում ե, մոռմ են 12 հոգի՝ ջրելու աշխատանքները կատարելու համար:

2. Հնձի ժամանակ բրիգադին նորից կցում են 50 հոգի, այսպիսով բրիգադի կազմում լինում ե 67 հոգի:

3. Կալի ժամանակ բրիգադին կցում են 15 հոգի, ընդամենը բրիգադում 32 հոգի:

4. Աշնանավարի և աշնանացանի աշխատանքները կատարելու համար բրիգադում պետք ե ունենալ առնվազն 40—45 հոգի, վորպեսզի հնարավոր լինի աշնանացին բոլոր աշխատանքները կատարել ժամանակին և վորպես:

ման գործում նրա դերի ու անելիքների հետ.

2. Բրիգադին կցված հողամասերը բաժանի ըստ հողակտորների,
այդպիսին ամբացնի առանձին ողակների, տվյալ սեղուում նրանց
վրա վորոշ աշխատանքներ կատարելու համար.

3. Սառուցի գյուղատնտեսական գործիքները և բրիգադին
կցված վողջ ինվենտարը.

4. Բրիգադի ողակների միջև բաշխի բոլոր պարտականու-
թյունները, աշխատող անսառունները և ինվենտարը.

5. Ամեն որ աշխատանքը վերջացնելուց հատու սառուցի յուրա-
քանչյուր ողակի, յուրաքանչյուր կուտանտեսականի կատարած աշ-
խատանքի վորակն ու քանակը.

6. Կատարած աշխատանքի համապատասխան հաշվի առնի
յուրաքանչյուր կուտանտեսականին հասանելիք աշխարերը.

7. Հինգ որը մեկ անգամ կուտանտեսության վարչությանը
ներկայացնի կուտանտեսականների արտադրած աշխարերի մասին
տեղեկագիր, այդպիսին ստուգի կուտանտեսականների հաշվիներում՝
և աշխարքույկներում ձեվակերպելու համար.

8. Ամեն որ աշխատանքներն ավարտելուց հետո՝ դաշտում
կամ գյուղում հրավիրի բրիգադի կամ ողակի անդամների 10—
15 բողեյի տեղողությամբ խորհրդակցություն, հաշվի առնի որվա-
լնթացքում կատարած աշխատանքների թերությունները, հաջողու-
թյունները և յուրաքանչյուր ողակին տա նոր ազգության՝ հա-
ջորդ հնդորյակի աշխատանքների համար (յեթե նախկին առաջա-
դրանքն ավարտված ե).

9. Բրիգադիրը պետք և յուրաքանչյուր աշխատանքի
մասին պարբերաբար ինֆորմացիա տալ կուտանտեսության վարչու-
թյանը և պահանջել համապատասխան ցուցումներ.

10. Բրիգադիրը պետք և բրիգադի ժողովներում հաճախակի,
զեկուցի բրիգադի աշխատանքների մասին.

11. Բրիգադի ընդհանուր ժողովում լսել լավ և վատ կազմա-
կերպված առանձին ողակների զեկուցումը՝ փորձի փոխանցման
նպատակով:

Այս բոլորը կատարելու համար պետք ե կազմակերպված, պատ-
րաստված բրիգադիրներով ապահովել բրիգադները, վորպեսզի
նրանք վայելեն իրենց բրիգադի և բոլոր կուտանտեսականների
համակարանքը, լավ ըմբռնած լինեն աշխատանքի դիսցիպլինայի
անհրաժեշտությունն ու արտադրության խնդիրները:

Բոլոր կուտանտեսություններում պետք ե ծավալել իխստ պայ-
քար՝ բրիգադիրների կազմի հոսունության դեմ և կայունացնել
բրիգադիրների կազմը: Կուտանտեսության վորեւ բրիգադիրի
աշխատանքից ազատելու վորոշումը կարող ե իրազործվել միայն
հողբաժնի կամ Մ. Տ. Կ.-ի հաստատումից հետո: Կուտանտեսության
վարչությունն առանց այդ վորոշման իրավունք չունի բրիգադի
բին աշխատանքից աղատել:

Բրիգադիրներն իրենց այդ ղեկավար աշխատանքի համար
կուտանտեսություններից ստանում են վորոշ վարձատրություն՝ աշխ-
որերով, նախորոք, իհարկե, հաշվի առնելով նրանց աշխատանքի
պայմանները, ծավալը, փորձառությունն ու ծանրաբեռնվածու-
թյունը:

Բրիգադի ամբողջ աշխատանքների հաջողությունը կախված ե
բրիգադիրի հմուտ և խելոք ղեկավարությունից: Լավ և աշխատում
այն բրիգադը, վորն ունի լավ ղեկավարված, անուշագիր ու թու-
լամորթ բրիգադիրը կարող ե տապալել բրիգադի վողջ աշխատանք-
ները:

«Կուտանտեսական արտադրության կազմակերպման մեջ
խոշոր նշանակություն ունի բրիգադիրի ղեկավար դերը:
Բրիգադիրի հմտությունից ե կախված՝ կուտանտեսականների
միջև աշխատանքի միջատ բաշխումը, քաշող ուժի, մեքենա-
ների նպատակահարմար ուժագործումը, ագրոտեխնիկական
պահանջների կատարումը, վորոնցով պայմանական ենք բեր-
քատվության բարձրացման համար»:

(ԽՍՀՄ նախկին Կուտանտեսականի վորոշումից):

Յուրաքանչյուր կուտանտեսական իր բրիգադիրից պետի պա-
հանջի աշխատել լավ, բոլշևիկորեն, իսկ յուրաքանչյուր բրիգադիրը
պետք և ամուր պահի աշխատանքի դիսցիպլինան և կարգը, իխստ
պայման մղելով լողերի, գոփովների դեմ, քաջալերի, առաջ քա-
շի լավագույն, բարեխիղճ կուտանտեսականներին:

Ամենակարեսր հանգամանքը վորի վրա պետք ե իխստ ուշա-
գրություն դարձնել, ինչպես իր ճառում (հունվարյան պլենումում)
ցույց տվեց ընկ. ՍՏԱԼԻՆԸ, այդ կուտանտեսական ղեկավար կադ-

ըերի, այդ թվում և բրիգադիրների սոցիալական կազմի կարգավորման խնդիրներ պետք ե ծավալի ամենախիստ վճռական պայքար բրիգադիրների շարքերը սողոսկված կուլակային, յենթակուլակային հակախորհրդային տարրերի դեմ և այդ աշխատանքին առաջ քաշել լավագույն, փորձված, աղնիվ կոլտնտեսականներ:

10. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտադրական խորհրդակցությունն ամենալավ ձևերից մեկն ե կոլտնտեսական մասսային կոլտնտեսության աշխատանքներին ակտիվ կերպով մասնակից դարձնելու, տնտեսությունը կոլեկտիվ կերպով զեկավարելու համար:

Կոլտնտեսություններում արտադրական՝ խորհրդակցությունների միջոցով մենք յուրաքանչյուր կոլտնտեսականի համար հնարավորություն հնագ ստեղծում մոտիկից ծանոթանալու կոլտնտեսության վողջ աշխատանքներին, նրա առաջ դրված խնդիրներին, և հատկապես խորանալ բրիգադի աշխատանքների մեջ. առաջ ըուցումները՝ տնտեսությունն ամրապնդելու, բարձրացնելու և թերությունների դեմ պայքարելու համար:

Կոլտնտեսությունների արտելային ներկա ձևնու նրա սոցիակայացնում: Կոլտնտեսությունն աշխատավորական գյուղացիական ման գործն ել ավելի ամուր հիմքերի վրա պետք ե դրված լինի, կամավոր կազմակերպություն ե, հետեւաբար կոլեկտիվ զեկավարվորպեսզի այդպիսով մենք կարողանանք ամրապնդել, խորացնել հիման վրա նոր քայլեր անել . դեպի կոլտնտեսությունների ավելի բարձր աստիճանը:

Պրոլետարական դիկաստուրայի յուրաքանչյուր նոր ձեռնարկանդամների, վոր պրոլետարական ու աշխատավորական գյուղաժամանակություններ և ամրանում են այդ ձեռնարկումների անհրաժեշտ գնում են դեպի նըանց կենսագործումը:

«Ըստ մեր պատկերացումի, պետությունն ուժեղ ե մասների գիտակցականությամբ: Նա ուժեղ ե այն ժամանակ, առաջ մասսաներն ամեն ինչ գիտեն, ամեն ինչի մասին գիտեն դատել և ամեն ինչ անել գիտակցորեն:»

Մենք պարտավոր ենք հետևել կյանքին, մենք պետք ե տանք լիակատար աղատություն ժողովրդական մասսաների ստեղծագործությանը: Լենին:

Արտադրական խորհրդակցությունները կոլտնտեսություններում վոչ թե վարչական խնդիրներ լուծող կազմակերպություններ են, ինչպես կարծում են հաճախ, այլ նրանք հասարակական կազմակերպություններ են, վորոնք կոչված են մոքիլիզացիայի յենթարկել կոլտնտեսական մասսաների ակտիվությունը, ուժը՝ կոլտնտեսությունն ամրացները պլանները կատարելու, արտադրությունը ուսցիունացման յենթարկելու խնդիրների շուրջը, մի խոսքով, նրանք կոչված են կոլտնտեսության վարչության ոգնելու, խորհուրդներ տալու համար:

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքների լավ կազմակերպվածության գեղքում, կոլտնտեսականը հնարավորություն ունի ժամանակին իրեն հետաքրքրող ու տնտեսությանը վերաբերող հարցեր դնել կոլեկտիվի առաջ, լուսաբանել ու ճիշտ ընթացք տալ: Դրանով մենք հնարավորություն ենք տալիս կոլտնտեսականի մեջ զարգանալու՝ հետաքրքրությունը գեղի կոլտընտեսության բոլոր խնդիրները և հատկապես հարվածելու, թերությունները վերացնելու, տնտեսության աշխատանքները բարելավելու արթուն ինքնազատողի վերաբերմունքը:

Այսպիսով, արտադրական խորհրդակցությունները կոլտնտեսություններում պետք ե գառնան մի միջոց կոլտնտեսական մասսաներին կոլտնտեսության աշխատանքներին, նրա զեկավարման գործին մոտիկից մասնակից դարձնելու ճանապարհով կազմակերպություն, տնտեսապես ամրացնել կոլտնտեսությունը, նրա արտելային ձեր և դրա հիման վրա կոլտնտեսականին աստիճանաբար սոցիալիստական վերադասարիակման յենթարկելու միջոցով, նրան դարձնել գյուղի լիակատար սոցիալիստական վերակառուցման, բանվոր գուսակարգի զեկավարությամբ սոցիալիզմի համար պայքանություն մարտիկ:

Արտադրական խորհրդակցությունները պետք ե կազմակերպել:

1. Կոլտնտեսության վարչության կից.
2. Բրիգադին կից.
3. Ըստ առանձին արտադրական ճյուղերի (որինակ՝ անազանդաւթյաւն, գաղտավարություն և այլն):

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքի բովանդակությունը պետք է լինի՝

1. Մասնակցել կոլտնտեսության արտադրական պլանը կազմելու գործին, մանրամասն քննության առնել նրա բոլոր պայմանները, ցուցանշերը՝ նրանց կատարումն ապահովելու համար.

2. Յեներով կոլտնտեսության պայմաններից, քննության առնել աշխատանքի կաղմակերպման ձևերը, ու քաջող ուժի, գործիքների նպատակահարմար ոգտագործման խնդիրները.

3. Ամեն տեսակի խորհուրդներով, կոնկրետ ցուցումներով նպաստել կոլտնտեսության պլանը և բրիգադների արտադրական առաջադրանքները ժամանակին կատարելու գործին.

4. Կազմակերպել աշխատանքի սոցիալիստական ձևերի—սոցմրժման ու հարվածայնության աշխատանքները կոլտնտեսությունում, կատարել արդյունքների ստուգում, հայտնաբերել լավագույն հարվածայիններին, շահագուգուել նրանց ել ավելի ակտիվ կերպով պայքարել կոլտնտեսության ամրապնդման համար։ Լավագույն կոլտնտեսականներին առաջադրել կոլտնտեսության դեկավար աշխատանքների.

5. Հսկել, հետևել, փոր կոլտնտեսության միջոցները, բանվորական ուժը, լծկանը և այլ արտադրական միջոցները ծախսվեն նպատակահարմար ու խնայողաբար.

6. Զարկ տալ արտադրության ուսցիոնալացման, գյուտարարության աշխատանքներին, բոլոր առաջարկությունները ժամանակին քննել և համապատասխան ընթացք տալ.

7. Հաճախակի լսել կոլտնտեսության վարչության և բրիգադիքների դեկուցումները, տալ համապատասխան ցուցումներ.

8. Արտադրական խորհրդակցությունների աշխատանքները վարչության աշխատանքներին չհակադրելու համար, նրա բոլոր վորոշումները պետք ե հաստատվեն կոլտնտվարչության կողմից։

Կոլտնտեսության կից արտադրական խորհրդակցության աշխատանքները պետք ե դեկավարի վարչության նախադահը կամ վարչության անդամներից մեկն ու մեկը, փորը լավ հասկանում և արտադրության աշխատանքներից։ Իսկ բրիգադի խորհրդակցության աշխատանքները դեկավարում ե բրիգադիրը կամ ագրուազուական պայքարը։

Ցուրաքանչյուր կոլտնտեսության դեկավարություն արտադրական խորհրդակցություններին պետք է լայն ծավալ տալ Առանց կոլտնտեսականների լայն ու ակտիվ մասնակցության

հնարավոր չե ամրացնել կոլտնտեսությունը, պայքարել կոլտընտեսության բոլշևիկացման համար։

Կոլտնտեսության դեկավարը պետք ե գլխավորի, կազմակերպի կոլտնտեսականների ակտիվությունը, ենտուզիազմը, նա բարձրացնի ել ավելի բարձր աստիճանի վրա և ծառայեցնի տնտեսության շահերին, նրա կազմակերպչական տնտեսական ամրապնդման գործին։

ՍՈՅ-ՄՐՅԱԿԵՐՊՈՒՄԸ

Խորհրդային Միությունը՝ գյուղատնտեսության, կոլեկտիվացման ու մեքենայացման հիման վրա, դարձել ե ամենախոշոր հողոգտագործական յերկիրն ամբողջ աշխարհում։

Որեցոր մեծանում, աճում, ամրանում են կոլտնտեսությունները, գառնալով իսկական բոլշևիկան կոլտնտեսություններ։ տասնյակ հազարավոր կոլտնտեսություններ արդեն հաստատ քայլերով գնում են դեպի ունեսոր ու կուլտուրական կյանք։

Այս բոլոր հաջողությունների հիման վրա որեցոր աճում և բարձրանում ե կոլտնտեսականի աշխատանքը, աստիճանաբար արմատական գեղի կոլտնտեսական աշխատանքը, աստիճանաբար արմատական փոփոխման և յենթարկվում մանր սեփականատիրոջ հոգեբանությունը։ Այս բոլորը կարելի յե ավելի խորացնել, ու ստեղծված վոգերությունը բարձրացնել ել ավելի բարձր, ամուր աստիճանի վրա, յեթե աշխատանքի սոցիալիստական ձևերի կիրառման գործում լինենք ավելի քան հետևողական։

Աշխատանքի սոցիալիստական ձևերից ամենակարևորը և գլխավորը կոլտնտեսությունների համար դա սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունն ե, վորը կոլտնտվարության ներկա շրջանում դարձել ե միլիոնավոր մասսաների սեփական գենքը, մարտական միջոց աշխատանքի վոգերության, վորակի բարձրացման, պլանների կատարման համար։

Սոցիալիստական մրցումը, դա ընկ. ՍՏԱԼԻՆԻ խոսքերով ասած, միլիոնավոր մասսաների մաքսիմալ ակտիվության հիման վրա սոցիալիզմի կառուցման մեթոդն ե. իրավես մրցումը այդ այն լժակն ե, վորի ոգնությամբ բանվոր դասակարգը կոչված ե ամրող յերկրի տնտեսական ու կուլտուրական կյանքը հեղաշրջել սոցիալիզմի հիմքերի վրա։

Կազմակերպել իրական սոցիալիստական մրցում այնպես, ինչպես առաջադրել են մեզ մեծ առաջնորդները—Լենինը,

Սոտալինը,—անհնարին և առանց պլանավորման ու հաշվառման առողջ գրվածքի:

Մեզ մոտ գեռես կան բավականին մեծ թվով կոլտնդեսություններ, վորոնք ժամանակին կազմակերպում են սոցիալիստական մրցումը, բայց նրա արդյունքները չեն կարողանում հաշվի առնել, չեն քաջալերում լավագույն բարեխիղճ կոլտնտեսականներին, չնորհիվ հաշվառման ու պլանավորման վատ գրվածքի:

Հետեաբար, վորակնողի մենք կտրողանանք սոցիալիստական մրցումը ու հարվածայնությունը կազմակերպել այնպես, վոր տադրական արդյունք, ամրանա կոլտնտեսությունը, ապա առաջին հերթին պետք ե կանոնավորել՝

1. Մշտական կայուն արտադրական բրիգադների աշխատանքները.

Կատարել աշխատանքի ձիտ բաժանում՝ կոլտնտեսության, բրիգադների, ողակների ներսում, ձեւակերպել հասկացնել յուրաքանչյուր կոլտնտեսականին նրա անելիքը կոլտնտեսության առավանդման ու արտադրության կազմակերպման դուժում.

2. Ամուր հիմքերի վրա դնել կոլտնտեսության արտադրության պլանավորումն այնպես, վոր նա դառնա մատչելի և հասկանալի բոլոր կոլտնտեսականների համար, վորակնողի յուրաքանչյուր կոլտնտեսական իմանա, թե ավյալ տարում ինչ ցուցանիշներ, հաջողություններ ձեռք բերելու համար պետք ե նոտ պայքարի. ոգտվելով առիթից առանց տատանումների կարելի յետել, վոր մինչեւ այժմ յեղած մեր պլանների ձեռք համարած թե անմատչելի յեն կոլտնտեսական մասսաների համար.

3. Ուժեղացնել, կանոնավորել հաշվառման ու ստուգման գործը, առանց վորի անհնարին և սոց. մրցման կազմակերպումը ու արդյունքների հայտնաբերումը:

Ահա աշխատանքների ու արտադրության նման կազմակերպման դեպքում, կիրառելով աշխատանքի սոցիալիստական ձեռքը՝ սոց. մրցումն ու հարվածայնությունը, նա կսեղծի՝

1. Աշխատանքի արտադրողականության ու վորակի անհամեմատ բարձր ցուցանիշներ.

2. Աշխատանքի ամուր սոցիալիստական կարգապահություն.

3. Կոլտնտեսական գաշտերի բերքի բարձրացում.

4. Բանվորական որվա նպատակահարմար ոգտագործումն ու նրա խտացումը.

5. Կրաքարտնա պատասխանատվությունը թե կոլտնտեսա-

կանների և թե ղեկավարության մեջ հանդեպ նրանց հանձնարարված կոլտնտեսական աշխատանքի.

6. Յեզ արդյունք այդ բոլորի, որեցոր կամրանա, կհարստանա կոլտնտեսությունը և կդառնա իսկական բոլության:

Ահա այսպես աշխատեցին Բայանդուրի, Թավադոլակի, Հոռոմի կոլտնտեսությունները, վորոնք հեկտարից 20—25 ցենտներ բերք ստացան, կամ մեկ աշխորին Բայանդուրի կոլտնտեսականներն ստացան 18,5 կիլո հացահատիկ, Հոռոմինը 18 կիլո անցյալ տարվա հինգ կիլոյի դիմաց, Թավադոլակինը 19 կ., Դավշան Դլադինը 17 կիլո և այլն, ինարկե այսպիսի կոլտնտեսականների թիվը որեցոր գնալով բազմապատկվում ե:

Սոցիալիստական մրցման աշխատանքներն առողջ հիմքերի վրա գնելու համար ամեն մի կոլտնտեսություն պետք ե ունենա իր սոց. մրցման ու հարվածայնության շտաբը կամ յեռյակը, վորը պետք ե զբաղվի սոց. մրցման կազմակերպման, ստուգման ու արդյունքների հայտնաբերման գործով:

Այն միջոցները, վորոնք արամադրվում են հարվածայինների խրախուսման պարզեատրման համար, շատ կոլտնտեսություններում չեն ոգտագործվում կամ ոգտագործվում են այլ նպատակներով: Յեռյակը պետք ե հսկի և ամենախիստ միջոցներ ձեռք առնի նման միջոցներն իրենց նպատակին ժառայեցնելու համար:

Պետք ե պարզեցնել պայմանագրերն ու հասկանալի գարձնել ամեն մի կոլտնտեսականի: Հիմնականում սոց. մրցման պայմանագրում պետք ե պարզ ու հասկանալի ձևով տալ հետևյալ հարցերը.

1. Նպատակը (կարճ ու հասկանալի).

2. Կատարվելիք աշխատանքի ծավալը.

3. Կատարվելիք աշխատանքի վորակը.

4. Աշխատանքի սկիզբը, վերջը և ստուգման ժամկետը.

5. Իր աշխատանքի սահմաններում տեխնիկայի տիրապետման մասին.

6. Աշխատանքի բոլոր միջոցների (անասունի, գործիքների և այլն) դրությունը՝ ստանալու որը, աշխատանքը կատարելու ընթացքում և հանձնելու ժամանակ.

7. Քաղաքասայական աշխատանքներ—մասնակցել հասարակական աշխատանքներին, ագրո և քաղ. խմբակների պարագմունքներին, թղթակցել պատի լրագրին (յեթե գրագետ ե), վերացնել անգրագիտությունը և նման մի շարք հարցեր:

Սոց. մրցման պայմանագրերը պետք ե կնքեն կոլտնտեսություններում բրիգագների միջև, բրիգագայում ողակների միջև և ողակներում կոլտնտեսականներն իրար հետ, լողունգ ունենալով վոչ մի կոլտնտեսական առանց սոց. մրցման իրական գործնական պայմանագրի:

Մի վատառողջ յերեսույթ, վորի վրա անհրաժեշտ ե կանդ առնել, այդ հետեւյան ե. ինում են գեպքեր, յերբ իրար կողի աշխատող կոլտնտեսականներից մեկը՝ կատարելով իր պլանն, աշխատում ե խանգարել մյուսին, կասեցնել նրա պլանի կատարումը, իրենն ել ավելի առաջ տանելու համար. այդպիսիք մոռանում են այն, վոր հարգածային կոլտնտեսականը պետք ե աշխատի վոչ միայն իր պլանի կատարման համար, այլև նա պարտավոր ե և պետք ե աշխատի իր հետ տանել տասնյակ կոլտնտեսականներ. Նա վոչ միայն պատասխանառու յե իր աշխատանքին, այլև պատասխանառու յե այն խմբի աշխատանքներին, վորոնց հետ նա աշխատում ե:

11. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Աշխատանքի կազմակերպման գործարքային ձեվը հանդիսանում ե կոլտնտեսական արտադրության բարձրացման, նրա կազմակերպչական-տնտեսական ամրապնդման կարելորագույն և հիմնական լծակներից մեկը:

Աշխատանքի վարձատրման գործարքային սիստեմը հիմնականում ապահովում ե կոլտնտեսականի աշխատանքի նպատակահարմար ոգտագործումը և նրա աշխատանքի արտադրողականության բարձրացումը:

Գործարքը հականարկած ե «գոփողներին, լողերին, ձրիւկերներին և հասարակության ավելի հետամնաց մասին, վորոնք ուղղում են աշխատել վորքան կարելի յե քիչ և վատ, բայց պոկել նրանցից (պետքունից) ավելի շատ» (Լենին):

Բոլոր կոլտնտեսություններում, բոլոր տեսակի աշխատանքները առանց բացառության, պետք ե կատարվեն գործարքի հիման վրա այն հաշվով, վոր այն լինի պարզ և հասկանալի յուրաքանչյուր շարքային կոլտնտեսականի համար:

Կոլտնտեսություններում գործարքը ճիշտ կերպով անցկացնելու համար կոլտնտեսությունը պարտավոր ե կանոնավորել և լավ հիմքերի վրա դնել՝

1. Արտադրական նորմաների վորոշումը, վորպեսզի նրանք լինեն ճիշտ մշակված, և բղիեն կոլտնտեսության կոնկրետ պայմաններից.

2. Մանրամասն և ճիշտ կատարել աշխատանքի հաշվառումը.

3. Ստուգել, ճշտել կատարված յուրաքանչյուր աշխատանքի թե վորակը և թե քանակը.

4. Ճիշտ կերպով գնահատել ու վորոշել յուրաքանչյուր աշխատանքի կատարման համար հասանելիք աշխարերի թիվը:

Գործարքի բնչ ձեեր գոյություն ունի և վոր ձեր պետք ե կիրառել կոլտնտեսություններում: Գոյություն ունի յերեք ձե՝ բրիգադային, ողակային և անհատական:

Բրիգադային գործարք—դա գործարքի այն ձեն ե, յերբ վորեւ աշխատանք արվում ե բրիգադին՝ ամբողջ կազմով կատարելու համար: Այդ գեպքում նկատի յե առնվում թե ով ինչպես ե աշխատել և ապա ըստ այնմ ել հասանելիք աշխարերը բաժանում են իրար մեջ՝ վոչ թե հավասարապես, այլ ըստ յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի վորակի:

Սակայն իրականում շատ հաճախ այս ձեր խիստ կերպով աղավաղում են, այսինքն՝ աշխարերի բաշխումն չի կատարվում յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի վորոշում յուրագույն աղավաղում են բոլորի վրա հարակի ու քանակի, այլ աշխարերը բաշխվում են բոլորի վրա հավասարապես:

Գործարքային այդ ձեր բավական անհաջող ձեերից մեկն ե: Կոլտնտեսություններում, ներկա պայմաններում, այդպիսի ձեի կիրառումը շատ հաճախ հանգում ե «ձախ» հավասարեցման և դրա հետեւանքով թագցվում են գոփողներն ու լողերը: Պետք ե ամեն կերպ խուսափել այս ձեի կիրառումից, վորովինետե նա կարող ե կոլտնտեսության արտադրության բարձրացմանը շատ քիչ ոգուտ տալ:

Յերկրորդ ձեր, դա ողակային գործարքն ե: Այս գեպքում վորեւ աշխատանք հանձնարարվում ե ամբողջ ողակին, ողակն ստանալով աշխատանքը՝ այն բաժանում ե իր անդամների մեջ և կատարելուց հետո հասանելիք աշխարերը բաժանում անդամների միջև, յուրաքանչյուրի կատարած աշխատանքի վորակին համապատասխան: Այս գեպքում աշխատանքն ավելի յե հեշտանում, վորովինետե ողակը փոքր ե (6—7 հոգի), և հետեւապես աշխատանքի հաշվառումն ու նրա վորակի ստուգումն ավելի հեշտանում:

տանում ե, ինչպես նաև պայքարը լողիքի դեմ ավելի հաջող ընթացք ե ունենում:

Յերրորդ ձեր՝ դա անհատական գործարքն ե, վորր թե կուտանտեսության և թե կոլտնտեսականների համար ամենաձեռնտու և նպատակահարմար ձեերից մեկն ե: Այս գեղքում նախորդ արդեն պարզված ե լինում, թե ինչ աշխատանք քանի աշխոր արժեք բիբուղան ամբողջ առաջադրանքն ստանալուց հետո, իր հերթին այն հանձնարարում ե առանձին կոլտնտեսականների, վորոնք աշխատանքը կատարելուց հետո իրենց հասանելիք աշխորեն ստօնում են անհատաքար: Բայց շատ գեղքեր են լինում, յերբ անհատական գործարքը հասկանում են այսպես՝ 4—5 հոգով աշխատանքը կատարելուց հետո հասանելիք աշխորերը բաժանում են իրար մեջ: Այս վոչ թե անհատական գործարք ե, այլ աղաւաղիված ձեռվ ողակային գործարք:

Վարձատրման դեսակետից գործարքը լինում ե պարզ և պրոգրեսիվ:

Պարզ գործարքը հետեւյան ե.—ընդունենք վոր 60 կիլո բամբակ հավաքելլ գնահատված ե մեկ աշխոր: Յեթե կոլտնտեսականը հավաքի 60 կիլո, կտանա մեկ աշխոր: Յեթե հավաքի 75 կիլո՝ պետք ե ստանա 1,25 աշխոր, իսկ յեթե հավաքի 90 կիլո՝ ապա պետք ե ստանա 1,5 աշխոր, իսկ յեթե նորմայից պակառ հավաքի, ապա այս նույն սկզբունքով ել կպակասեցվի աշխորերի քանակը:

Գողքեսիվ գործարք կոչվում ե այն ձեր, յերբ արված նորմայից ավելի կամ պակառ կատարած աշխատանքի համար կուտնտեսականի աշխորերը վոչ թե ավելանում կամ ողակասում են հարաբերական չափով՝ այլ պրոդեսիվ չափով: Հասկանալի դարձնելու համար վերցնենք վերը բերած որինակը՝ յեթե 60 կիլո բամբակ հավաքելն արժե 1 աշխոր, ապա 75 կիլո հավաքելու դեպքում կուտնտեսականը 15 կիլոյի համար վոչ թե պետք ե ստանա 0,25 աշխոր, այլ ասենք թե 0,3 աշխոր, իսկ յեթե հավաքի 90 կիլո, ապա պետք ե ստանա վոչ թե 1,5 աշխոր, ինչպես առաջին դեպքում, այլ 1,7 աշխոր և այլն: Ինչպես տեսնում ենք, գնալով բարդանում ու գժվարանում ե թե հաշվառումը և թե վողջ աշխատանքները:

Այստեղից յերեւում ե, վոր կոլտնտշարժման զարգացման ու ամրացման համար միանգամայն նպատակահարմար և ձեռնուու յե գործարքի վարձատրման պարզ ձեր:

Մի ինդիր, վորի վրա մեծ ուշադրություն պետք ե դարձնել, այդ նորմայից ավելի կատարած աշխատանքի լրացուցիչ վարձատրման խնդիրն ե: Մեր շատ կոլտնտեսություններում կիբառվելով աշխատանքի գործարքային սխատեմը, նորմաներից ավելի և վորակով կատարած աշխատանքների համար հաճախ լրացուցիչ աշխատարելուց չեն հատկացնում ու այդպիսով արհեստական կերպով դցում աշխատանքի արտադրողականության աճը և գործարքի արժեքը: Այդ յերեւութը մենք նկատել ենք Վաղպատի, Ղուրապուղուու, Թալինի, Ախտայի և այլ շրջանների մի շարք կոլտնտեսությունների ժամանակակից ավել կատարած ուսումնասիրությունների ժամանակ:

Բոլոր կոլտնտեսությունների վարչությունները պետք ե կտրուկ միջոցներ ձեռք առնեն պայքարելու նման յերեւութի կոլտնտեսականներին պետք ե վարձատրել նրան արված դեմ: Կոլտնտեսականներից ավել կատարած աշխատանքի համար, յերբ պահպան վում ե աշխատանքի վորակը:

Աշխատանքի վարձատրման գործարքային սխատեմը յեկամուտն ըստ աշխորերի բաշխելու հիմքն ե: Այստեղ, վորտեղ վաստի հիմքերի վրա յե դրված գործարքը, հետեւարար յեկամարի բաշխումըն ըստ յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքի վորակի և քանակի կատարելլ հնարավոր չե, այս դեպքում յեկամարի բաժանման գործում իր գերը կիսադաշտական պակասարեցումը, վորպիսին ներկա ետապում հանդիւանում ե դասակարգային թշնամու զենքերից մեկը կոլտնտեսությունները քայքայելու համար:

Պետք ե պալքարել կոլտնտեսության բոլոր աշխատանքներում գործարքի ողակային և անհատական ձեր ձիշտ կաղմակերպման համար, կիրառելով վարձատրման պարզ ձեր:

«Կոլտնտեսական յեկամտի բաշխումը—ով շատ և լավ աշխատի, նա յիշ շատ կստանա և ով չի աշխատի, նա յիշ վոչինչ չի ստանա—պետք ե դառնա կանոն բոլոր կուտնտեսականների և կոլտնտեսությունների համար: Համապատասխան դրան բոլոր գյուղատնտեսական հիմնական աշխատանքները՝ վարը, ցանքը, բերքահավաքը, կալանը մասսայաբար պետք ե տարվի գործարքով՝ աշխատանքները գնահատված աշխորերով: Միայն այդ հիման վրա կարելի կինի ամբացնել աշխատանքային կարգապահությունը և աշխատանքի լավ կազմակերպումը կոլտնտեսություններում»: (ԽՍՀՄ 6-րդ խորհուրդ, համագ. վորոշումը):

12. ԲԵՐՔԻ ԲԱՇԽՍԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Յեկամտի ճիշտ բաշխումը կոլտնտեսություններում ունի վճառկան և խոշոր նշանակություն կոլտնտեսության թե քաղաքական և թե կազմակերպական ամրապնդման տեսակետից:

Յեկամտի ըստ աշխարհի բաշխման ձեւ արդյունք եւ և անմիջապես բղխում է կոլտնտեսության ներքին արտադրական հարաբերություններից, այն եւ, վոր բոլոր կոլտնտեսականները հավասար իրավունքներ և արտօնություններ ունեցող աշխատավորներ են, վոր կոլտնտեսությունը հասարակական սոցիալիստական ձեի տնտեսություն եւ յերկրորդ՝ արդյունք եւ կոլտնտեսությունների ներկա արտելային ձեի սոցիալական բնույթի:

Կոլտնտշինարության քաղաքական-տնտեսական ամրապնդման շահերը ներկա շրջանում պահանջում են, վոր կոլտընտեսության բոլոր աշխատանքները կատարվեն գործադարձի հիման վրա, վորովհետև գործադարձը կոլտնտեսական արտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևորագույն լծակներից մեկն եւ՝

«Ով լավ և շատ ե աշխատում, նա յել շատ կստանա, ով չի աշխատում, նա յել վոչինչ չի ստանա—պետք ե դառնա կանոն բոլոր կոլտնտեսականների և կոլտնտեսությունների համար»:

Այս վորոշումը առանց դործավարձի ճիշտ դրվածքի, առանց աշխարհի ճիշտ հաշվառման յերբեք հնարավոր չե կոլտնտեսություններում անշեղորեն կիրառել:

Յուրաքանչյուր կոլտնտեսական պետք ե լավ հասկանա, վոր յուրաքանչյուր տղնիվ, բարեխիղճ աշխատանք որեցոր ամրացնում ե կոլտնտեսությունը և նրա յեկամուտը, իսկ այդ իր հերթին բարձրացնում ե աշխարհական պետքը, կոլտնտեսականի յեկամուտը և բարելավում ե նրա կյանքը, ապրուստի պայմանները:

Ամեն մի կոլտնտեսականի ձգտումը պետք ե լինի շատ աշխատել լավ աշխատել և հետեւաբար շատ աշխարհը ստանար, բայց վրա հետ միաժամանակ պետք ե նկատի ունենալ, վոր ձգտել միայն և միայն աշխարհ կարգել՝ առանց մտածելու արտադրության և նրա գորակի մասին, այդ նշանակում ե ինքնին գցել աշխարհա արժեքը, վորը վերջին հաշվով հավաստրվում ե քիչ աշխարհ ունենալուն, որինակ՝ թեշիշենդի շրջանի հասանքյանդ

զյուղի կոլտնտեսությունը պլանով պետք ե ծախսեր ընդամենը 1800 աշխարհ, իսկ փաստորեն ծախսել է 2600 աշխարհ։ հակառակ դրան բերքը—յեկամուտը վոչ թե բարձրացել է, այլ անհամեմատ ընկել։ մեկ աշխարհը, վորն առաջին դեպքում պետք արժենար մեկ ոութի 20 կոպեկ, բայց աշխարհը շատ ծախս արժենար մեկ ոութի 90 կոպեկ, կամ մեկ ոութի որինակ։ նույն շրջանի Որթաքյանդի կոլտնտեսությունը, վորը պլանով պետք ե ծախսեր 1800 աշխարհ, ծախսել է 2144 աշխարհ և այն պետք ե աշխարհ 1800 աշխարհ, ծախսել է 2144 աշխարհ և այն նման փաստեր բազմաթիվ են և կարելի յե ասել, վոր շատ քիչ նման փաստեր բազմաթիվ են և կարելի յե ասել, վոր շատ քիչ դեպքերում ե, վոր աշխարհը գերածախսման հետ միաժամանակ բարձրացել ե կոլտնտեսության բերքն ու յեկամուտը։

Այս բոլորից պետք ե յեկամացնել, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական աշխարհը ստանալու հետ միաժամանակ պետք ե աշխատի բարձրացնել արտադրությունը, կոլտնտեսության ամառողջ յեկամուտը։ հակառակ դեպքում կարող ե ընկնել աշխարհի արժեքը, ինչպես մենք տեսամունք հասանքյանդի և Որթաքյանդի կոլտնտեսություններում։

Աշխարհը վատանելու խնդրում նմանապես խոչըր նշանագույնի արտադրական նորմաների մշակման խնդիրը։ կություն ունի արտադրական նորմաների մշակման թեթէ, այնտեղ, վորանել արտադրական նորմաները լինում ե աշխարհերի վատնումը և աշխատաված դրա հետեւանքը լինում ե աշխարհերի վատնումը։ Որինակ՝ Արթիկի տանքի արտադրողականության ցածրացումը։ Որինակ՝ Արթիկի շրջանի Դափիի դյուղի կոլտնտեսությունը շրջառածնի կողմից արժական արժական նորմաներն այնքան ե իջեցրել, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական որական 2—3 աշխարհ ե ստացել։ վոչխարի բեր տալ՝ մեկ աշխարհին հաշվել են 60 վոչխար, այդ հաշվով մեկ պատանի որական ստացել ե 2—3 աշխարհ, կամ քաղի նորման 0,75-ից իջեցրել են 0,5 հեկտար և այն։ Արտադրական պլանով նախատեսնված եր ընդամենը տարվա ընթացքում ծախսել 22700 աշխարհ, այնինչ մինչև հոկտեմբերի 10-ը ծախս ված ե 27000 աշխարհ։

Այս խնդիրը հետագայում իր դրական լուծումը կստանա այնքան, վորքուն վոր Հողգողկոմատում պատրաստված ե և շուտով տղագրության և հանձնվելու կոլտնտեսական աշխատանքների արտադրական նորմաների տեղեկատու։

Յեկամտի ճիշտ բաշխման հանգուցային խնդիրներից մեկն ել՝ զա կոլտնտեսականի կատարած յուրաքանչյուր աշխատանքին հասանելիք աշխարհը հաշվելու, նա ժամանակին կոլտնտեսականի

Ավանսավորումը պետք է կատարել՝ հաշվի առնելով տվյալ
կուտանսեսականի առ ավանսավորման օրն ունեցած աշխորեքը և
վոչ թե տալ այնքան, վորքան կարիք ունի կամ վորքան կոլ-
անստեսականը ցանկանում ե, ինչպես այդ արված է Իշեվանի, Քե-
շիքենդի քրջանների մի շարք կոլանտեսություններում:

2. Սառնկել պահեստները, բոլոր մթերքները աղբյոց զշամ
համեմատել հաշվապահական տվյալների հետ և ապա կազմել
համապատասխանաբանագրանագրություն պահեստի ստուգման արդ-
յունքների մասին.

3. Սառուկել բոլոր կոլտնտեսականների աշխատած-արագած պրած աշխորերը, համեմատել աշխատքույզի, աշխարերի հաշվառման գրքույզի, նարյադի ավյալների հետ, ճշտել սխալները և կազմել ցուցակ՝ թե ով վորքան աշխոր ունի առ բերքի բաշխման որը.

4. Հաշվել, թե աշնան աշխատանքների ընթացքում ըստ աշխատանքներ պետք է կատարվի կողևնափուլյունում և զորքան աշխատ պետք է ծախսվի այդ աշխատանքները կատարելու համար։ Առ բերքի նախնական բաշխման որը ծախսված աշխատերը՝ գումարած աշնան աշխատանքների համար նախատեսները աշխատանքները։

5. Ստուգել ըոլոր բրիդագների աշխատանքները, նրանց արտադրական առաջադրանքների կատարումը, վորոշել $10\text{--}20^{\circ}\text{f}$ -ի սահմաններում բրիդագներին պարզեատրելու կամ տուգանելու խնդիրը.

6. Հաշվել կոլտնտեսության համայնացված անասունը ա-
նասնակերի պահանջը մինչև արոտի դուրս գալը:

Այս բոլորը կատարելուց հետո սկսում ենք բերքի բաշխման աախտակների լրացումը՝ հաշվի առնելով կոլտնտեսության ամբողջ յեկամուտը՝ ստացված բոլոր ճյուղերից, թե մթերային և թե գրամական, արտահայտում ենք սուրբիներով՝ հաշված կոլտնտեսական գներով (գները նախքան բերքի բաշխումը արվում ե արջնորդաժմից) և ապա լրացնում ենք բերքի բաշխման այն աախտակը, վորը կոչվում ե «կոլտնտեսության յեկամուի հաշվառություն»:

Յաշվառումն ավարտելոց հետո պետք է հաշվի Յեկամտի հաշվառումն ավարտելոց հետո պետք է հաշվի առնել (նույնպես սուբլիներով) բոլոր հատկացումները, պար-

Հաշվում և աշխագրույկում զրանցելու խնդիրն եւ կան կոլտնտեսություններ, վորոնք բանվորական որը հաճախ շփոթում են աշխարհական և կամ թե վորեւե աշխատանքի կատարման համար հոսանքիք աշխարհ տրվում ե կոլտնտեսականին, անկախ նրա կատարած աշխատանքի վորակից ու քանակից, բավարարվելով միայն և միայն նրանով, վոր կոլտնտեսականը դուրս է յեկել աշխատանքի: (Հասանքյանդ, Որթաքյանդ, Լենինականի Փոքր Ղարաքիլիսա և այլն):

Ամեն մի աշխատանք կատարելուց հետո պետք է ստուգիլ նրա թե վորակը և թե քանակը և ապա հաշվել նրան հասանելիք ախցարը ու կանոնավոր կերպով 5 որը մեկ անդամ գրանցել կուտանեսականի աշխարհույկում և աշխարհի հաշվառման գրքում:

Աշխորերի ճիշտ հաշվառման և այդպիսին կոլտնտեսական-ների հաշվառմանը ճիշտ կերպով գրի առնելուց պետք է բղիք ավանսավորման խնդիրը, վորը նմանապես մեծ նշանակություն ունի բերքի ճիշտ բաշխման ու կոլտնտեսության ամրապնդման գործում։ Եաւ են այն կոլտնտեսությունների թիվը, վորտեղ սխալ ավանսավորման հետեվանքով տարեվերջին հասանելիք բերքը չի ծածկում տրված ավանսները և այդպիսիք զուրս գալուց հետո համարյա թե ստանալու վոչինչ չի մնում և հետեւապես կոլտնտեսականները մնում են պարտք կոլտնտեսության, որինակ՝ Դորիսի շրջանի Խնձորեսկ գյուղի կոլտնտեսության կոլտնտեսա-կանները պարտք են մնացել կոլտնտեսության առ բերքի վերջ-նական բաշխման որը 2250 սուբլի, նույնը և կարելի յև ասել իջևանի Վերին Աղգանի կոլտնտեսության մասին, վորտեղ կոլ-տնտեսականների պարտքը կոլտնտեսությանը կազմում է 2842 ռ., իսկ կոլտնտեսությունը պարտք և կոլտնտեսականներին 6845 ռուբլի հույն գրությունն և նաև Քեշիչքենդի շրջանի Հասան-քյանդի, Բաշքանդի, Որթաքյանդի, Քեշիչքենդի, Ղոյթուրի կոլ-տնտեսություններում։

Սիալ ավանսավորժան հետեւնքը լինում ե այն, վոր կոր-
տնաեսականների վորոց խումբը ավելի շատ ե ստանում, քան
նրան հասնում ե, իսկ մյուս խումբը ավելի պակաս իրեն
հասանելիքից, այսինքն կողանտեսականների մի խումբն ստանում
ե մյուս խորի հաշվին, վորը կողանտեսությունների ներկա
արտելային ձևին միանդամայն հակասող յերեսութ ե և խփում ե
կողանտեսության կազմակերպչական տնտեսական ամրապնդմուն
գործին:

տավորությունները, ֆոնդերը, զանազան ծախսերը և այդպիսիք գրի առնել «կոլտնտեսության յեկամտի նախնական բաշխման» տախտակում:

Այս բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո կազմում ենք մի նոր ոժանդակ տախտակ՝ «կոլտնտեսության յեկամտի մթերային մասի բաշխումը»:

Յեկամտի հաշվառման և բաշխման հաշիվներն ավարտելուց հետո պետք է մանրամասն հաշվել՝ թե վոր կոլտնտեսականը տարվա ընթացքում ինչ ավանս և ստացել՝ թե մթերքով և թե դրամով և վորքան և պարտ կոլտնտեսությանը:

ԱՆՈՒՆ, ազգանուն և մատկանուն	Սահմել և մթերքով					Սահմել և փողով	Մանուկուն
	Ցողեն	Քարի	Հաց	Յուղ	Պահելու		

Յեկ ապա հաշվի յենք առնում՝ թե վորքան աշխոր ունի յուրաքանչյուր կոլտնտեսական առ բերքի նախնական բաշխման որը, այնուհետև պետք է հաշվել կոլտնտեսականին հասանելիք մթերքի քանակությունը, գուրս գալ նախորոք ավանսով տրված պարտքը, իսկ մասցածն ամբողջությամբ հանձնել իրեն կոլտնտեսականին իր տունը տեղափոխելու համար:

ԱՆՈՒՆ, ազգանուն և մատկանուն	Աշխատանքներ և մթերքներ					Աշխատանքներ և մթերքներ	
	Ցողեն աշխատանքներ և մթերքներ	Քարի աշխատանքներ և մթերքներ	Հաց աշխատանքներ և մթերքներ	Յուղ աշխատանքներ և մթերքներ	Պահելու ¹ աշխատանքներ և մթերքներ		
1 Գրիգոր Կառապետյան	210	2,100	400	1,700	630	100	530

Իսկ աշնան աշխատանքների համար նախատեսնված աշխատերին հասանելիք յեկամուտը՝ թե մթերքներով և թե դրամով մնալու յե կոլտնտեսության վարչության տրամադրության տակ, հետագայում աշնան աշխատանքների ընթացքում աշխատած և աշխորեք ունեցող կոլտնտեսականներին բավարարելու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

- Առաջաբան 3—5
- Կոլտնտեսությունների կազմակերպչական ամրապնդման խնդիրները 6—9
 - Աշխատանքի կազմակերպման և հաշվառման մասին 9—11
 - Մշտական բրիգադը կոլտնտեսության ամրապնդման որինական լծակն ե 12—14
 - Վորքն և մշտական բրիգադի կազմակերպման հիմնական սկզբունքը 14—20
 - Ինչպիսի բրիգադներ պետք է կազմակերպել 20—24
 - Ինչպես առանձնացնել բրիգադի հոգամասը և ինչպես կոմայլեկտափորել նրա մշտական կազմը 24—37
 - Ինչպես բաժանել ցանքացանառության դաշտերը բրիգադների մեջ 37—46
 - Աշխատանքի կազմակերպումն ու բաշխումը բրիգադի ներսում 46—47
 - Բրիգադիրը և նրա անելիքները 47—50
 - Արտադրական խորհրդակցություններ 50—53
 - Սոցմքայի կազմակերպումը 53—56
 - Գործարքի կազմակերպումը 56—59
 - Բերքի բաշխման կազմակերպումը 60—61



024

ԳԻՒԾ 60 4.



Ար. Մարգար

Организация труда в колхозах

(Научно-Иссл. Институт соц.-рек. с.-к. ССР Армении)

Сельхозгиз 1934 Эривань

ՀՀ Ազգային գրադարան



NL0220101

30.699